ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3636-Ա « 24 » հուլիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԵՏՐՈՍ ՊԵՏՈՅԱՆԻՆ ԳԵՐՄԱՆԻԱ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԲԵՌԼԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանի 16.07.2026 թվականի Ն/46521-26 գրությունը և Բեռլինի Լիխտենբերգ շրջանի ղեկավար Մարտին Շեֆերի հրավերը՝ Բեռլինի Apple Festival (Apfelfest) միջոցառմանը մասնակցելու, համագործակցության հաստատման հարցերը քննարկելու նպատակով.

1.Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանին՝ 2026 թվականի սեպտեմբերի 10-ից 12-ը ներառյալ գործուղել Գերմանիայի Դաշնային Հանրապետության մայրաքաղաք Բեռլին:

2.Ընդունել ի գիտություն, որ Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը՝ բացառությամբ ավիատոմսի, որը իրականացվում է Կենտրոն վարչական շրջանի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3.Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի բացակայության ընթացքում Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Արթուր Ջուլհակյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ